

ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Է. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի մտածողության մեջ ուրույն տեղ են ունեցել բնապաշտական մոտիվները, որոնք հետագայում դարձել են բանաստեղծության նյութ և իրենց յուրօրինակ դրսևորումներով հարստացրել և՛ բանավոր, և՛ գրավոր քնարերգությունը:

Հայտնի է, որ բնապաշտությունը միջնադարյան երևույթ չէ: Այն իր արմատներով գալիս է դեռևս նախապատմական ժամանակներից, երբ մարդը շնչավորում էր բնությունը:

Նախնադարյան մարդու համար աշխարհն իր տարերքով ներկայանում է որպես կենդանի էակ: Բացակայում է մարդու՝ որպես սուբյեկտի և շրջապատող աշխարհի՝ որպես օբյեկտի, որոշակի ու պարզ հակադրությունը:

Մարդկանց կախվածությունը բնությունից այնքան ուժեղ է եղել, որ նրանց կողմից ստեղծված աշխարհի պատկերը իր մեջ ներառել է շատ գծեր, որոնք՝ վկայում են այն մասին, թե մարդը անկարող է եղել իրեն առանձնացնել շրջապատող միջավայրից:

Այսպես, հին սկանդինավյան պոեզիայում հաճախակի է հանդիպում մարդու մարմնի մասերի նույնացումը անկենդան բնության հետ և հակառակը: Օրինակ՝ մարդու գլուխը նույնացվել է երկնքի հետ, մատները՝ ծառի ճյուղերի, ջուրը՝ հողի արյան, քարերը՝ ժայռերը՝ ոսկորների, խոտը և անտառը՝ երկրի մազեր են համարվել և այլն¹:

Դարեր պիտի անցնեին, որ փոխվեր մարդկային մտածողությունը, և բնության երևույթների նման ընկալումը դիտվեր որպես պատկերավոր մտածողության արգասիք, այսինքն՝ մարդը կարողանար բնությունը ընկալել «կողքից», որոշակի սահմանադատում կատարել իր և բնության միջև:

Աշխարհի բոլոր ժողովուրդներին էլ հատուկ է եղել բնությունը շնչավորելու այս երևույթը: Նրանք ունեցել են իրենց հավատալիքներն ու զանազան ծեսերը, որոնք անցել են տվյալ ժողովրդի մշակույթի պաամության մեջ ու գոյատևել: Այսպես՝ մինչև այսօր էլ Հնդկաստանում և մյուս արևելյան երկրներում պահպանվում է հին ժամանակներից եկող ծառերի հետ ամուսնանալու սովորույթը, այսինքն՝ նրանց կողմից ևս ծառը դիտվել է որպես կենդանի էակ: Իսկ օրինակ, գերմանացիների համար սրբազան են եղել ամբողջական անտառներ ու պուրակներ և սարսափելի պատիժ է սահմանվել նրա համար, ով կհանդգներ ծառի կեղևն անգամ վնասել²:

Հայերի նախնիները դեռ նախապատմական ժամանակներում շնչավորել են բնությունը, մի բան, որ դրսևորվել է նրանց հեթանոսական հավատալիքներում, հարատևել ու հաճախ պահպանվել նաև քրիստոնեության ժամանակ:

Հայտնի է մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքը. որը հատուկ է եղել համարյա բոլոր ժողովուրդներին, իսկ հայկական հեթանոսական հավատքում այն արտահայտվել է Առաքի պաշտամունքի ձևով:

Գր. Ղափանցյանը Արա աստվածության պաշտամունքի էությունը կապում է հենց այդ մեռնող և հարություն առնող տոտեմ՝ գաղաթի, ոռոսանանության, ծիլի, կանաչի, երկրագործության, վարդադանքի հետ: «Այս բնությունից կատարվել է ամենուրեք,—գրում է նա,—օրինակ Եդիպոսում Շղի-

¹ Հմմտ. А. Я. Гуревич, Категории средневековой культуры, М., 1984, с. 59.

² Հմմտ. Д. Д. Фрезер, Золотая ветвь, М., 1983, с. 16, 111.

րիս աստվածը, որպես մեռնող և հարություն առնող ընդհանուր այս մեր արեւելյան աստծու ձեւակերպումը, նկարների մեջ պատկերացվում է և նմանեցվում ծլող բույսին կամ ցորենին: Մի կողմից նկարված է Օղիրիսը դամբարանում, մյուս կողմից ծլող Օղիրիսը, որը խորհրդավոր կերպով պատկերացնում է բնության զարթոնքը, վերակենդանանալը⁸:

Գրականության մեջ նշված է, որ գարուն ու զարթոնք է խորհրդանշել նաև Համբարձման տոնահանդեսը՝ կապված Արայի հին (բուսական ու գարնանային) բնույթի հետ:

Նախաքրիստոնեական հինավուրց տոն է եղել նաև ծառզարդարը, դարձյալ կապված հողի արթնացման, բնության ուժերի պաշտամունքի հետ, որը հետագայում նույնպես փոխանցվել է քրիստոնեությանը, այսպես. այդ օրը եկեղեցում հատկապես ուռենի են օրհնել, հիմնականում նորապսակներն են ուռենու ոստերը տուն տարել և տնկել: Իսկ երեխաները շրջել են տնից տուն ձեռքերին դալար ոստեր բռնած և երգել, մի բան, որն իր արտահայտությունն է դաել նաև բանահյուսության մեջ:

Ծառզարդար, ծառին զարդար,
Խունդ առեք, խունդ ծխեցեք,
Սև հավեն հավգիթ կուզեմ,
Կարմիր կովեն եղ գուզեմ⁴:

Հասկանալի է, որ խունկ առնելը, խունկ ծխելը փոխարինել է բնապաշտական զոհաբերության արարողությանը: Ինչպես Ա. Օդաբաշյանն է նկատել. «Վաղուց հայտնի է, որ զոհաբերության գաղափարն իր բուն հիմքով կապված է բնապաշտական աշխարհըմբռնման հետ»⁵:

Ջատկի տոնը ևս, որ մինչև այսօր պահպանվել է քրիստոնյա ժողովուրդների մեջ, դարձյալ հեթանոսությունից է անցել քրիստոնեությանը և իր էությունը կապվում է գարնանը հարություն առնող բնության, նրա կենսական ուժերի պաշտամունքի հետ: Ջատկական տոնի ձուն էլ իր մեջ խտացնում է ողջ բնության զարթոնքը և վերածնվող ուժերի գաղափարը⁶:

Այս առումով հայկական բանահյուսության մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Ահա ցնծայ ծովն ու ծփայ» հին հեթանոսական պարերգը: Այն ըստ էության կապվում է հեթանոսական գարնանային տոնախմբության հետ: Երգի հիմքում ընկած է արևի, ծովի, կենաց ծառի և կենսական այլ ուժերի վերածնության գաղափարը:

Ահա ցնծայ ծովն ու ծփայ,
Ալին զալին տա՛յ,
Ծովն յարևուն մանր աւազին
Խաղա՛յ, ծփա՛յ.
Ի՛նչ ալին զալին տա՛յ?

Երգն այնքան սիրված է եղել ժողովրդի կողմից, այնքան տարածված, որ նրա նմանությամբ ստեղծվել են նաև երգի այլ տարբերակներ:

Այդպիսին է, օրինակ, ժողովրդական բանահյուսության մեջ պահպանված «Զէծ» պարերգը⁸:

⁸ Գ. ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 90:

⁴ Հմմտ. Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական զարգարվեստ, Երևան, 1955, էջ 98:

⁵ Ա. Ա. Օ դ ա ր ա շ յ ա ն, Քրիստոնեական Ամանորի հետ կապված որոշ ծիսական վերապրումներ (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1965, № 3, էջ 92):

⁶ Հմմտ. Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Նշվ. աշխ., էջ 98:

⁷ Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 304:

⁸ Հմմտ. Գ ա ց է թ, տեքստը ո՞րն ա կերել զէծ,
Գ ա ց ի ն տեքստ գէլն ա կերել զէծ,

Հայկական հին հավատքում բնության ուժերից մեծ տեղ է գրավել նաև ջրի պաշտամունքը: Եվ դա հասկանալի է, քանի որ հնագույն երկրագործը առատ բերք ու բարիք կարող էր ստանալ միայն այն ժամանակ, երբ հողը ողողվեր հորդառատ անձրևներով: Իսկ շոր ու երաշտ եղանակներին նրան մնում էր դիմել կախարդական գործողությունների, հավատալով, թե կարող է ստիպել բնությանը անձրևելու: Հենց այդ իմաստն է կրում իր մեջ ժողովրդի մեջ պահպանված նուրին շրջեցնելու ջրապաշտական ծեսը: Այդ հավատքն ու դրա հետ կապված ծեսը բազմաթիվ ձևերով իր արտահայտությունն է գտել հայկական բանահյուսության մեջ, օրինակ.

Նուրին, Նուրին եկելա,
Աջբահուրին եկելա
Շիլա շապիկ հագելա
Կարմիր գոտիկ կապելա:
Ջուր բերեք գլխին ածենք,
Եղ բերեք պորտը (կամ վարսը) քսենք,
Բարով աստծով անձրև գա
Ձեր հոր արտեր կանաչնա,
Մեր Նուրինի փայ տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք⁹:

Ըստ Մ. Աբեղյանի, Նուրինը ջրի դիցուհի Աստղիկ-Դերկետոյի պատկերն է, որը երգի մեջ (երկրորդ տող) կոչվում է «աջբահուրին», իսկ սա նշանակում է՝ հրաշալի հավերժահարս: Քրդերը Նուրինն անվանում են «բուկա բարանե», որ նշանակում է անձրևի հարս¹⁰:

Ջրի պաշտամունքի արտահայտությունն է նաև Վարդավառի տոնը, որ մինչև օրս էլ պահպանվել է ժողովրդի մեջ. «Ջրային պաշտամունքի բնույթ է կրում քրիստոնեական անունով հորշորջվող, բայց իր էությունը ամբողջովին հեթանոսական այն տոնը, որ հայտնի է «Վարդավառ» անունով և սովորաբար ընկնում է ամառվա կեսերին: Վարդավառ բառը սանսկրիտերեն է և նշանակում է ջրցանություն: Հիրավի, մինչև այժմ էլ մնացել է այդ եկեղեցական տոնի մեջ իրար վրա ջուր ցանելու հինավուրց ժողովրդական սովորությունը¹¹:

Պատահական չէ, որ միջնադարյան ժողովրդական մի շարք երգերի հիմքում ընկած է ջրի կենսական անհրաժեշտության գաղափարը, որոնցում անցնում է այն միտքը, թե շուրը կյանք է, թե նա է շունչ ու կենդանություն տալիս աշխարհին.

— Ջո՛ւր, դուն ի յո՞ւր այգին կերթաս,
Իմ պաղունկ ջրիկ, 'ւ անուշիկ, հա՛յ:
— Ես ի յա՛յն այգին կերթամ,
Որ տէրն ի մէջն է այգեպան, հա՛յ:
— Ջո՛ւր, դուն ի յո՞ւր տունկ կու ջրես,
Իմ պաղունկ ջրիկ, 'ւ անուշիկ, հա՛յ:
— Ես զա՛յն տունկն կու ջրեմ,
Որ տակն խո՛տ բերէ գառին, հա՛յ և այլն¹²:

⁹ Ինչն, ըղիծուն, էֆն ըզտկուն, տիկ զարեուն և այլն (Ա. Բրուտյան, Ռամկական միմունքներ, Ալեքսանդրապոլ, 1901, էջ 86):

¹⁰ Հմմտ. Մ. Աբեղյան, Վիշապներ կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 90:

¹¹ Նույն տեղում, էջ 91:

¹² Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, էջ 292:

¹³ Ա. Մ. Նաթանյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 153:

Հայերի հեթանոսական հավատքում մեծ տեղ է բռնել նաև արևապաշտությունը: Այդ պաշտամունքի մնացորդներից է, օրինակ, Վասպուրականի ժողովրդի մեջ խոր հնությունից եկող էդ բարևը, այսինքն այգողջունը, որ կատարում են հարսն ու փեսան պսակի հաջորդ օրը: Այսպես՝ դեռ արևը չծագած՝ հարսնեվորները և նվագածուները, երբեմն նաև քահանայի առաջնորդությամբ, բարձրանում են տան վտուրը կամ մի բարձր տեղ, որտեղից լավ երևա արևածագը: «Թագուհին» և «թագավորը» բռնում են թաշկինակի փայրերից և երեսները դեպի արևելք դարձրած՝ կանգնում: Ազգայնորդ զուռնայի նվագակցությամբ երգում են: Մեր բանահյուսության մեջ պահպանվել են այդ երգի մի քանի հատվածներ.

էգ(այգ) բարև, ա՛յ էգ բարև,
էգն արևուն տանք բարև,
Տայ թագավորին շատ բարև,
Վահէ, Վահէ...¹³

Ուշագրավ է, որ արևին ուղղված առավոտյան աղոթքի խոսքեր են շնչացնել վանեցի մամիկներն ու պապիկները. «Ե՛մ շաղաթաթախ կանանչ կարմիր աղօթարան, որ ճողճողուեր ես վէր Վարադայ պանծրիկ սարին, քե եմ ապավինեմ և այլն»¹⁴:

Եվ վերջապես մեր կարծիքով արևի պաշտամունքի մի հրաշալի օրինակ է բողածին Վահագնի ծնունդի նկարագրությունը մեր հնագույն գուսանական երգերում.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ,
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աշկունքն էին արեգակունք¹⁵:

Նախաքրիստոնեական շրջանում շատ ժողովուրդների է հատուկ եղել բուսապաշտությունն ու կենդանապաշտությունը: Այն Հայաստանում ևս տարածված է եղել հեթանոսության ժամանակ:

Ժողովրդական բանավոր ստեղծագործություններում շատ ավանդություններ կան ծառերի ու ծաղիկների մասին: Ահա մի հետաքրքիր ավանդապատում՝ կապված աղբրանց-արուն ծաղկի հետ. «Յոթ եղբայրներ լեռնեւրում սպանվել են քուրդ ավազակների ձեռքով: Նրանց արյունից բուսել է մի տխուր, արնագույն ծաղիկ: Սրա մոտ գրեթե միշտ աճում է կակաչը, որն իր զանգակաձև պսակը կախած լաց է լինում սպանված եղբայրների համար»¹⁶:

Ծաղիկների պաշտամունքի արտահայտություն են նաև «ջան գյուլումի» երգերը: «Ջան գյուլումի» երգերում աղջիկներին ու հարսներին համեմատում են փունջ մանուշակի հետ.

Չինի-չինի հարսըներ,
Փունջ մանուշակ աղջրկներ...
Ջա՛ն, գյուլում, ջա՛ն, ջա՛ն,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն:

¹³ Հմմտ. Ե. Լալայան, Ազգագրական հանգես, Թիֆլիս, 1914, էջ 52:

¹⁴ Նույն տեղում, էջ 21:

¹⁵ Մովսիսի Խորենացու պատմություն հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, էջ 85—86:

¹⁶ Հմմտ. Ա. Տ. Ղազարյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 113:

Այդ ծաղիկ բառի տակ հասկացվել է ոչ թե բուսական այս կամ այն ծաղիկը, այլ ընդհանրապես ծաղիկը, որն իր մեջ ամփոփել է աճման և պտղաբերության գաղափարը¹⁷։ Դրա փայլուն արտահայտություններից է, օրինակ, այն, որ ժողովրդական երգերից մեկում երիտասարդ տղան սիրած աղջկան ներկայանում է ծաղկի տեսքով.

Ծաղիկ մ' է բուսեր
Մեր շինուց վերև,
Մեր շինուց վերև,
Խօցէր ղօրն ըզմեղ:

Թէ ամսէ-ամիս՝
Կոճկիկս իմ արձակ,
Կոճկիկս իմ արձակ,
Դուն մուտ՝ թէ կարես:

Թէ տարոց-տարի՝
Քեզ կըտրիճ որդի,
Քեզ կըտրիճ որդի,
Խիլայ՝ թէ կամիս...¹⁸

Քիչ չեն նաև այն օրինակները, երբ ծաղկի և կնոջ անվանումները նույնացվում են՝ ստեղծելով բանաստեղծական գողտրիկ պատկերներ.

Վարդիկ սիրուն ի վարդի նման,
Բիւրիւններ վերէն հէյրան էլան.
Վարդ որ պըտկէր՝ ծաղիկ կըտար,
Վարդիկիս հոտը մէջէն կուտար¹⁹:

Ծառերի պաշտամունքը ևս իր արտահայտությունն է գտել ժողովրդական բանավոր ստեղծագործություններում։ Այդ առումով խիստ հետաքրքրական են հարսանեկան կենաց ծառերի երգերը, դանազան ծառագովքերը։ «Տաղ գեղեցիկ և ընտիր» միջնադարյան երգը կենաց ծառի հրաշալի գովերգ է.

Ծաղկեցաւ ծառն կենաց
Եւ աննման էր,
Լուսեղէն պտուղ երբեք
Եւ աննման էր.
Ճղերն ամէն արջայական
Եւ աննման էր.
Տերեն ամէն արփիափայլ
Եւ աննման էր.
Գարնանային հոտ որ ելավ
Եւ աննման էր.
Դաշտերդ ամէն ծաղկով ի լի
Եւ աննման էր և այլն²⁰:

Իսկ «Երկնային խնձոր» ուշաճրավ երգը մի գեղեցիկ ներքող է՝ նվիրված խնձորենուն։ Երգի մեջ խտացված է ժողովրդական այն պատկերացումը, թե խնձորն իր մեջ սիրո խորհուրդն է կրում.

17 Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական դարձարվեստ, էջ 10:

18 Հմմտ. Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 121:

19 Վանա սաղ, 2-րդ մաս, Թիֆլիս, 1899, էջ 43:

20 Ա. Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 96: Բնչպես նկատել է Ա. Ս. Մնացականյանը, այդ երգերը հետագայում ենթարկվել են կրոնական վերամշակման (նույն տեղում, էջ 577):

Մառ հազար, ժաղկունք հազար տեսայ հս,
 Մառերաց մէջ խնձորենին տարաւ իմ ուշքն,
 Հոտովն անմահական մ'ալլայ հս:
 Դէլի-ասլին, կլաթն ասեմ կարմիր քան զըմէն,
 էրկնուց էր ասեմ այն կարմիր խընձոր.
 — Խնձորն խիստ անմահական էր,
 Խընձոր ծառին հաւան կացայ հս:
 Մառն խընձորի որ ղըղզըղէր ու ասէր,
 Սիրոյ նըշան հս եմ, սըրտի նըշան հս եմ,
 Ո՛չ վարդ, ո՛չ շուշան, մէկը չի ձիկ նըման,
 Աննըման հմ հս, ծառոց աննըման²¹:

Ժողովրդական հնագույն հավատալիքների մեջ ուրույն տեղ ունի կենդանապաշտութիւնը: Ինչպես և. Սամվելյանն է նկատել. «Նախնի հայն իր հոգեպաշտական աշխարհայացքով տոգորված, անշուշտ, դարնան գալուստը կապում է կենդանական ներկայացուցիչների, գլխավորապես չվող թռչունների երևալու հետ»²²:

Դրա ապացույցն այն է, որ հայերը պաշտել են արագիլը, ծիծեռնակը, սարյակը, կոռնկը և հատկապես աղավնին: «Նախամոր, սիրո և պտղաբերութեան գաղափարների հետ կապված աղավնին է համարվել այն էակը, որից իբր թե մարդկութիւնը ստվորել է սիրել ու սիրվել»²³: Դրա համար էլ աղավնու պաշտամունքը մեծ չափով է դրսևորվել ժողովրդական պոեզիայում և ընդհանրապես հայ բանաստեղծութեան մեջ: Աղավնուն նվիրված ժողովրդական այս գողտրիկ երգը դա լավագույն օրինակներից մեկն է.

Հայ եղվրնէկ, գարուն էր, եկաւ աշուն,
 Հայ եղվրնէկ, էտ ինչ խտար քու ձէն անուշ էր
 Իմ շատ խոցերուն:
 Հայ եղվրնէկ, մեռնիմ էտ քու նշխուն տօտերուն:
 Հայ եղվրնէկ, էտ ի՞նչ շատ մարալ էր,
 Հայ եղվրնէկ, էտ ի՞նչ խտար
 Զքու թևեր Աստուած նշխուն է ստեղծի,
 Որ իսան հաներ է²⁴:

Դարնան ավետաբեր թռչուններից են արագիլը, ծիծեռնակը: Նրանց մասին հյուսված երգերում արտահայտված է ժողովրդի սերն ու գորովը այդ թռչունների նկատմամբ:

Արագիլ, բարով եկիր,
 Դուն արագիլ, բարով եկիր,
 Ըմե գարնան նըշան բերիր,
 Դու մեր սըրտիկ ղըւարթ արիր:
 Արագիլ, մեզի իջիր,
 Դուն արագիլ մեր տուն իջիր և այլն²⁵:

Եվ կամ՝

Միծառն է եկեր՝ և անցեր
 Ու գարնան հոտն հոտոտեր,
 Յորտեղ գնացած հաւ կայ,
 Նայ ամէնն բարով են դարձեր:

21 Վահա սաղ, 2-րդ մաս, էջ 16, 17:

22 Խ. Սամվելյան, Նշվ. աշխ., էջ 203:

23 Ա. Մ. Մնացական, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 284:

24 Բաղմավէպ, 1873, № 21, էջ 271:

25 Դ. Ալիշան, Հայոց երգը ռամկականը, Վենետիկ, 1852, էջ 61:

Սարերն էլ խնդում ելան
Ու գարնան արաղ են արեր.
Յէսօր մեզ հազար երնէկ,
Ծառն մուշտուկով մեզ երեր²⁶։

Ժողովրդական մի երգում էլ տարվա շորս եղանակները ներկայացվում են՝
«կանաչ, կարմիր, դեղին ու սպիտակ» թուղունների բանաստեղծական պատ-
կերով։

Ալվայ եկին ան հաւերն,
Նուվայ եկին ան հաւերն,
Կենէ եկին ան հաւերն,
Որ ամէն գարուն կու գային.
Հագեր են կանաչ կապայ,
Հագեր են կանաչ կապայ,
Ի վրա կանչին շուրջ կու գան և այլն²⁷։

Կոռնկի մասին ես ժողովրդական հետաքրքիր ավանդույթուն կա. «Ասում են, թե կոռնկ սպանելը մեծ մեղք է։ Երբ հրացանը աչքիդ առնես նշան բրո-
նելու, կոռնկն իսկույն դառնում է գեղանի հարս՝ ծծկեր մանուկը կրծին»²⁸։
Ժողովրդական երգերում կոռնկն է այն նվիրական թուղունը, որի հետ
հայ պանդուխտը կապել է հայրենի եզերքից խաբրիկ մը՝ առնելու հույսը։
Շատ են կոռնկի մասին երգերը։ Այդ երգերում պանդուխտի սրտի մորմոքն
է, հուսահատութիւնը, նաև հույսը, իսկ նրա վշտակիցը, լրատարն ու լրա-
բերը՝ կոռնկը։

Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛, ձայնիկդ ի հոգիս,
Դուն ալ խիստ քաղցրիկ ձայնիկ մի ունիս,
Աշուն է մօտեցեր, երգալու կամիս,
Բարօժ դառնաս, բերես գարնան աւետիս։
Կանչէ՛, կոռնկ, կանչէ՛, ձայնիկդ ի հոգիս,
Երթաս բարօժ դառնաս, մուրատիտ հասնիս,
Ղարիպութիւն անկայ, տրտում է գերիս,
Թխտիկ մի բեր տնէս, մխիթարէ զիս²⁹։

Կենդանիներից պաշտվել են եղջերուն ու ցուլը։ Դրանք նվիրվել են Անա-
հիտ դիցուհուն։ Այս հաստատում է X դ. մի ձեռագիր չրիչ՝ Գիշի որդի Հով-
հանես ավագ երեցը. «Տրդատ յառաջին ամի ետ նուէրս Անախտա կապու-
տակ երինջ ի գեղն Երիզա»³⁰։

1975 թ. Լոռի բերդի նախնադարյան դամբարանադաշտում բացվեց
մ. թ. ա. XIV—XIII դդ. Թվագրվող դամբարան։ Հետաքրքրական էր եղջերու-
ների բրոնզե արձանախումբը. կենտրոնում վեհորեն կանգնած արու եղջե-
րուն՝ փարթամ եղջուրներով, նրա երկու կողմերում էգերը, որոնց տակ
նստած ձագուկները կաթ են ծծում։ Արձանախումբը պաշտամունքային բնույթ
է ունեցել և օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ։ Այն
զանգակների ձայն է արձակել՝ պտտվելով իր առանցքի շուրջը։ Եղջերուն
այստեղ ներկայանում է որպես մայրության և պտղաբերության խորհրդա-
նիշ։

Ուշագրավ է, որ եղջերուն, որպես մայրության ու պտղաբերության պաշ-
տամունքի մնացորդ, պահպանվել է հայկական հեթանոսներում ու ավանդու-
թյուններում, օրինակ՝ Լոռվա շրջանի լեգենդանման մի հեթանոսում պատմվում

²⁶ Ա. ս. Մ ն ա ց կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 263, 264։

²⁷ Նույն տեղում, էջ 265։

²⁸ Ա. Տ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, էջ 136։

²⁹ Ա. ս. Մ ն ա ց կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 254։

³⁰ Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 23, էջ 262։

է աղքատ ալորի կնոջ մասին, որը ծննդաբերում է անտառում և կաթ չունի
երեխային կերակրելու: Երեխայի լացին մայրը պատասխանում է.

Նանա, նանա օրսագուլ,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունենա՝ քիչ կտա,
Քամին կգա ժաժ կտա,
Մանդրատերեր փափկոց կլի,
Լենատերեր ծածկոց կլի⁸¹:

Հայերի համար սիրելի կենդանի է եղել նաև աղվեսը: «Աղվեսը բարի ուժերի
սիրվող է, որը պայքարում է շար ուժերի դեմ՝ հանուն դարնան, բերքի ու
մարդկային բարեկեցիկ կյանքի»⁸²:

Ահա թե ինչպես է ներկայացվում աղվեսը ժողովրդական մի երգում.

Ով աղուեսուկ, փոքրիկ գազան,
Ոտերըն կարճ ու խիստ վազան,
Շրներն ամէն քեղ չի հասան,
Սիրո՞ւն աղուես, ազին՝ ծաղիկ⁸³:

«Ազին ծաղիկ» կամ «ծաղիկ պոչ» հասկացողությունը հնում ունեցել է իր
հատուկ բովանդակությունը: Հին պատկերացումների համաձայն, պառաբե-
րության երևույթը սերտորեն կապված է համարվել պոչի հետ⁸⁴:

Ինչպես տեսնում ենք հայ ժողովրդական բանահյուսությունը շափա-
զանց հարուստ է բնապաշտական մոտիվներով: Բազմաթիվ ու բազմազան
ալլ օրինակներ ևս կան, որոնցում իր արտահայտությունն է գտել բնապաշ-
տությունը: Դրանք օրորոցային երգեր են, ծխական-կենցաղային զանա-
զան երգեր, երգիծական բնույթի երգեր և այլն:

Բնապաշտական մոտիվները հետագայում ներթափանցել են գրավոր
բնարեբզության մեջ՝ առանձին գրավորություն հաղորդելով նրան:

ПАНТЕИСТИЧЕСКИЕ МОТИВЫ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

Э. С. АВЕТИСЯН

Р е з ю м е

Пантеистические мотивы играли определенную роль как в мышлении других народов, так и армян. Армянский фольклор также насыщен пантеизмом. В этой связи особенно примечательны колыбельные, ритуально-бытовые, сатирические сочинения, сказки и легенды. Впоследствии пантеистические мотивы из устного народного творчества проникли в письменную литературу, в основном, в лирику.

⁸¹ Հմմտ. Ս. Հ. Դեվեջյան, Եղջերվի պաշտամունքի հետքերը հին Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 1982, № 2, էջ 148):

⁸² Ա. Ս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 265:

⁸³ Ա. Ս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 380:

⁸⁴ Ա. Ս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 266: